

թուականը նշանակած էր անոր մահուան համար: Պէտք է խորհել որ նմանապէս սխալ իմացած է «Սա (Առաքել) ի Յապոնիայ Կաթողիկոսէ երկիցս առաքեցաւ ի Հոռոմ վասն հաստատելոյ զմիաբանութիւն»: Ասոր համար Ռօշքան արեւէ ապացոյց չի տար եւ ցարդ որեւէ ապացոյց մէջտեղ չէ ելած, պարզապէս անոր համար որ այդպիսի բան մը չէ կատարուած Յակոբ Ի. Դին:

Աւելի զգոյշ է իր վկայութեան մէջ վարդան Արքեպ. Յունանեան (մեռած 1715 Յունիսին) իր «Թուղթ քաջալերական» գրութեան մէջ ուրիշ Հայր Գալէմքեարեան յառջ կը բերէ սա վկայութիւնը «Առաքեալ Վ. Բոսկիկ անուանեցեալ, Եպիսկոպոս Երնջակու դաւառին, ոչ միայն զրեաց, այլ եւ բազմիցս զիմեաց ի Հոռոմ եւ անդէն զկեանն զրաւեաց»: Յունանեան ոչ մէկ խօսք կ'ընէ Առաքելի Յակոբ Զուղայեցիէ առաքուած ըլլալուն եւայլնի մասին թէեւ, ինչպէս տեսանք, կը ճանչնար Առաքելը:

Այժմ նկատի առնենք տապանադրութիւնը:

Կ'ըսուի թէ «նախ ձեռնադրեալ եպիսկոպոս Փահրապատու»: Մեզի չըսուիր թէ ե՞րբ եւ ո՞րմէ: Հայր Գալէմքեարեան բոլորովին մտացածին կերպով կ'եկրակացնէ: «Ի սկզբան Փահրապատու եպիսկոպոս ձեռնադրուած էր որչափ կ'երեւայ 1648ին, եւ յետոյ (ըստ տապանաքարին 1659էն ետեւ) Նախիջեւանայ Երնջակ դաւառի Ս. Կարապետ վանքին Արքեպ. եւ Առաջնորդ գրուեցաւ նոյն Կաթողիկոսէն»: (Հանդ. Ամս. էջ 710) Դժբաղդաբար տապանադիրը այդպիսի բան մը չըսեր այլ որոշ կերպով կ'ըսէ «եղեւ յետոյ Արքեպիսկոպոս Նախիջեւանայ եւ առաջնորդ վանաց եւ վիճակին Երնջակայ Սրբոյ Կարապետի»: Հոս «նոյն Կաթողիկոսէն» այսինքն Փիլիպպոս Աղբակեցի էջմիածնայ Կաթողիկոսէն Առաքելի Արքեպիսկոպոս Նախիջեւանայ եւայլն եւայլն ԴՐՈՒԵԼՈՒՆ ոչ մէկ յատակութիւն կայ:

Ի՞նչպէս կրնար Փիլիպպոս Աղբակեցին 1659էն ետեւ Առաքելը այդ պաշտօններուն բարձրացնել երբ ըստ տապանադրին Առաքել «ի թվին ՌՈՅԹ» (1659)

Դաւանեալ ի Հոռոմ զհաւատն ուղղափառ» այսինքն երբ Հոռոմի մէջ Առաքել հոռոմէադաւան եղաւ: Սակայն Փիլիպպոս չէր կրնար նման բան ընել նախ եւ առջ որովհետեւ 25 Մարտ 1655 թուին մեռաւ:

Յետոյ Հայր Գալէմքեարեան պէտք չէր որ հաւատար Առաքելի տապանադրութեան: Փահրապատ էջմիածնայ նուիրապետութեան կազմութեան մէջ պատուակալ արքեպիսկոպոսութիւն էր եւ ոչ թէ եպիսկոպոսութիւն: Իսկ Նախիջեւանը արքեպիսկոպոսութիւն չունէր այլ եպիսկոպոսութիւն, Աստապատի նման:

Այսպէս, չէ կարելի տարակուսիլ որ տապանադրին մէջ տրուած անորոշ կենսագրական տուեալները իրականութիւնէն կը խոտորին եւ հաւանաբար կազմուած է յերիւրանքներէ որոնց տուն տուած էր Առաքել իր կենդանութեան: Տապանադրին յերիւրածոյ տեղեկութիւնները միայն ազդուր ունի նաեւ Հ. Ղ. Վրդ. Ալիշան (Սիսական էջ 351-2): Հետաքրքրական է որ 1664ին զրեալ զրչագիր մը կը յիշէ «երկիրս Երնջակ ասի ի վիճակն սուրբ Կարապետի, առաջնորդութեան տեսոն յեսայի հեղահողի վարդապետի» (Սիսական էջ 354, նկար 111): Դարձեալ կրկնեմ, որ տապանադրութեան մէջ յիշուած միակ ճշմարիտ վկայութիւնը հաւանաբար Առաքելի 67 տարեկան հասակին մէջ 6 Օգոստոս 1680ին մեռնիլն է:

Առաքելի իբր թէ գրուած նամակը Յակոբ Զուղայեցիէ իր դաւանական պարտականութեամբ պէտք էր զաղտնի գրեր, այսինքն իր ձեռքով իսկ, եւ զաղտնի ալ ուղարկեր է, այլապէս եթէ նամակը իր թշնամիներուն ձեռքը իյնար գլխուն մեծ փորձանք կրնար զալ: Նոյնպէս ալ հայ հասարակութիւնը իր Կաթողիկոսին դաւանափոխութիւնը երբեք պիտի չնքնէր եւ այդ ալ ուրիշ պատճառ մը: Սակայն նամակը որոշ է որ իր երկար եւ պաշտօնական սկզբնաւորութեամբ Յակոբ Զուղայեցիի ինքնազիրը չէր, քանի որ մենք ցոյց պիտի տանք նկարներով իր ինքնագիր նամակները եւ պիտի արտադրենք պարունակութիւնը, որ մեր ըսածը պիտի հաստատէ: